4530	ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող4531+տող4532+տող4533)	x	325 536 100,0	325 536 100,0	X	325 536 100,0	325 536 100,0	X	39 128 539,0	39 128 539,0	X
	որից՝										
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	322 736 100,0	322 736 100,0	X	322 736 100,0	322 736 100,0	X	39 128 539,0	39 128 539,0	X
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ (տող 4534+տող 4535 +տող 4536)	4639	2 800 000,0	2 800 000,0	X	2 800 000,0	2 800 000,0	X	0,0	0,0	X
4536	- այլ		2 800 000,0	2 800 000,0	X	2 800 000,0	2 800 000,0	X	0,0	0,0	X
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄՆԵՐ (տող4610+տող4630+տող4640)	x	30 020 000,0	30 020 000,0	X	30 020 000,0	30 020 000,0	X	788 000,0	788 000,0	X

[illegible]

5110	Շենքերի եւ ՇՆԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113)	x	539 160,2	X	403 539 160,2	464 782 160,2	X	464 782 160,2	58 984 593,0	X	58 984 593,0
	որից՝										
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	389 682 660,2	X	389 682 660,2	422 298 360,2	X	422 298 360,2	56 930 110,0	X	56 930 110,0
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	13 856 500,0	X	13 856 500,0	42 483 800,0	X	42 483 800,0	2 054 483,0	X	2 054 483,0
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵ (տող5121+տող5122+տող5123)	x	64 696 700,0	X	64 696 700,0	64 696 700,0	X	64 696 700,0	50 000,0	X	50 000,0
	որից՝										
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	46 000 000,0	X	46 000 000,0	46 000 000,0	X	46 000 000,0	0,0	X	0,0
5122	- Վաղչական սարքավորումներ	5122	3 046 700,0	X	3 046 700,0	3 046 700,0	X	3 046 700,0	50 000,0	X	50 000,0
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	15 650 000,0	X	15 650 000,0	15 650 000,0	X	15 650 000,0	0,0	X	0,0
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	9 105 400,0	X	9 105 400,0	9 105 400,0	X	9 105 400,0	548 500,0	X	548 500,0
	որից՝										
5131	-Աճեցվող ակտիվներ	5131	2 000 000,0	X	2 000 000,0	2 000 000,0	X	2 000 000,0	0,0	X	0,0
5134	- Լախազծանետագոտական ծախսեր	5134	7 105 400,0	X	7 105 400,0	7 105 400,0	X	7 105 400,0	548 500,0	X	548 500,0
6000	Գ. ՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	-11 000 000,0	X	-11 000 000,0	-11 000 000,0	X	-11 000 000,0	-17 928 614,0	X	-17 928 614,0
	այդ թվում՝										
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130)	x	-11 000 000,0	X	-11 000 000,0	-11 000 000,0	X	-11 000 000,0	0,0	X	0,0
	այդ թվում՝										
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8131	-11 000 000,0	X	-11 000 000,0	-11 000 000,0	X	-11 000 000,0	0,0	X	0,0
6400	ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	x	0,0	X	0,0	0,0	X	0,0	-17 928 614,0	X	-17 928 614,0
	այդ թվում՝										
6410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8411	0,0	X	0,0	0,0	X	0,0	-17 928 614,0	X	-17 928 614,0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Handwritten signature]

Բ.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,
ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՆԱՌԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝

[Handwritten signature]

Վ.ԱՊՐԵՍՅԱՆ

Հավելված թիվ 4
ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու
2022-թիվ «14» ապրիլի թիվ 32-Ա որոշման

ՀՀ ֆինանսների նախարար, 206006, Սպիտակ ք.
Հաշվետվություն
Համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասույթի (Դեֆիցիտի) կատարման վերաբերյալ
(02/01/22 - 31/03/22թ. ժամանակահատվածի համար)

	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան				Փաստացի		
Տողի		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
NN		(ս.4 + ս5)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(ս.7 + ս8)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(ս.10 + ս11)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
7000	ԸՆԴԱՍԵՆԸ ՀԱԿԵԼՈՒՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԸ)	-241 886 860,20	-13 632 900,00	-228 253 960,20	-241 886 860,20	-13 632 900,00	-228 253 960,20	150 881 581,20	171 389 360,20	-20 507 779,00

[illegible]



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Handwritten signature]

Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,
ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՆԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝

[Handwritten signature]

Վ.ԱՊՐԵՍՅԱՆ

ՀՀ ֆինանսների նախար, 206006, Սպիտակ ք.
Հաշվետվություն

Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների
(02/01/22 - 31/03/22թ. ժամանակահատվածի համար)

Տողի	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	
NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝
	անվանումները	NN	վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8300), (տող 7000 հակառակ Նշանով)	241 886 860,2	13 632 900,0	228 253 960,2
	այդ թվում՝			
8100	Ա. ՆԵՐՋԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160),(տող8000-տող8300)	241 886 860,2	13 632 900,0	228 253 960,2
	այդ թվում՝			
8110	1. ՓՈՆԱՌՈՒՄ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8111+տող 8120)	0,0	0,0	0,0
8111	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) (տող 8112+տող 8113)	0,0	X	0,0
8120	1.2. Վարկեր և փոխառություններ (ստացում և մարում) (տող 8121+տող8140)	0,0	0,0	0,0
	այդ թվում՝			
8121	1.2.1. Վարկեր (տող 8122+տող 8130)	0,0	X	0,0
8140	1.2.2. Փոխառություններ (տող 8141+տող 8150)	0,0	0,0	0,0
	որից՝			
8160	2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190+տող8201+տող8202+տող8203)	241 886 860,2	13 632 900,0	228 253 960,2
	այդ թվում՝			

[illegible]

8310	1. ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8311+տող 8320)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	այդ թվում՝								
8311	1.1. Արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) (տող 8312+տող 8313)	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝								
8320	1.2. Վարկեր և փոխառվածքներ (ստացում և մարում) տող 8321+տող 8340	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
8321	1.2.1. Վարկեր (տող 8322+տող 8330)	0,0	X	0,0	0,0	X	0,0	0,0	X
	որից՝								
8340	1.2.2. Փոխառվածքներ (տող 8341+տող 8350)	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

[Signature]

Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ,
ԳՆՈՒՄՆԵՐԻ, ԳՈՎԱԶԴԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻ ՊԵՏԻ Ժ/Պ՝

[Signature]

Վ.ԱՊՐԵՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » ապրիլի 2022թ. N^o 33 - Ա

«ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՀԱՍՅԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով, գտնվելու վայրի նոր հասցե սահմանել «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Շահումյան 7, փոստային դասիչը՝ 1804» և հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

ԿՈՂՄ (15)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻՔԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻՔԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՕՆՏՈՐՈՐՈՅԱՆ Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14

ք. Սպիտակ

Հաստատված է
Սպիտակ համայնքի ավագանու
14.04.2022թ. թիվ 33-Ա որոշմամբ

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. Ընդհանուր դրույթներ

1. «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/ շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ենթակայության կազմակերպություն է: Կազմակերպությունը ստեղծվել է Սպիտակի քաղաքապետի 2007 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 210 որոշումով և Սպիտակի համայնքի ավագանու 10.12.2007թ. թիվ 56 որոշումով, Սպիտակի քաղաքապետարանի «Բնակարանների սպասարկման գրասենյակ» բյուջետային հիմնարկի վերակազմակերպման արդյունքում՝ վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2. Կազմակերպության հիմնադիրը Սպիտակ համայնքն է:

3. Կազմակերպությունն իր հիմնական գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Կազմակերպությունը և դրա ողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Սպիտակ համայնքին:

6. Կազմակերպության լրիվ անվանումն է՝ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Շահումյան 7, փոստային դասիչը՝ 1804:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները

8. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն օրենքով և այլ իրավական ակտերով հիմնադրին վերապահված լիազորությունների առավել օպերատիվ և արդյունավետ իրականացմանն ուղղված աշխատանքների իրագործումն է:

9. Կազմակերպության խնդիրներն են.

ա) բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը,

բ) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող և Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրում գտնվող գույքի վարձավճարների, անշարժ գույքի հարկի գումարների, ինպես նաև համայնքի բյուջե մուտքագրվող այլ գումարների հավաքագրումը,

գ) Սպիտակ համայնքում ինքնակամ շինարարության դեպքերը կանխելու ուղղությամբ հիմնադրի կողմից սահմանված միջոցների կիրառումը,

դ) համատիրությունների կազմավորման աջակցումը,

ե) քաղաքացիների հաշվառման աշխատանքների կազմակերպումը և իր իրավասության սահմաններում համապատասխան տեղեկանքների հատկացումը,

զ) Սպիտակ համայնքի բնակավայրերի զարգացմանն ուղղված ընթացիկ և հեռանկարային ծրագրերի մշակումը,

է) Սպիտակ համայնքի բնակավայրերում հակահրդեհային և հիգիենիկ համաճարակային կանոնների պահպանման նկատմամբ իրավասու մարմինների կողմից հսկողություն իրականացմանն աջակցումը,

ը) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի կողմից իրականացվող միջոցառումների կազմակերպմանն աջակցումը,

թ) Սպիտակ համայնքի «Կայուն էներգետիկ զարգացման ծրագրի» իրականացմանը, էներգախնայողությանը և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանն ուղղված աշխատանքներին աջակցությունը,

ժ) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանը նպաստող վերանորոգման աշխատանքներին աջակցելու նպատակով վարկային միջոցների ներգրավում և հիմնադրի թույլտվությամբ վարկային պայմանագրի կնքումը,

ի) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն օժանդակելու նպատակով բնակարանների սեփականատերերի հետ համաձայնագրերի կնքումը,

լ) բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետությանը նպաստող շինվերանորոգման աշխատանքների իրականացման համար սեփականատերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված վարձավճարի գանձումը,

խ) Սպիտակ համայնքի ենթակառուցվածքների պահպանումը և սպասարկումը,

ծ) ըստ անհրաժեշտության Սպիտակ համայնքի կանաչապատումը,

կ) օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացումը:

3. Կազմակերպության իրավունակությունը

10. Կազմակերպության իրավունակությունը ծագում է դրա պետական գրանցում ստանալու պահից:

11. Կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, ինչպես նաև հիմնադրի առանձին որոշումներով և կարգադրություններով:

12. Կազմակերպությունն ունի անվանում, հիմնադրի անունից իրեն ամրացված գույք, հիմնադրի կողմից սահմանված ձևի կլոր կնիք, դրոշմ և ձևաթղթեր:

13. Կազմակերպությունն օրենքի սահմաններում, իր կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար, հիմնադրի անունից իրավունք ունի՝

ա) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ,

բ) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ,

14. Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև հիմնադրի որոշմամբ:

15. Կազմակերպությունը պարտավոր է՝

ա) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,

բ) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների ակտեր, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր), կնիքի, իրեն ամրագրված գույքի պահպանումը:

4. Կազմակերպության կառավարումը

16. Կազմակերպության հիմնադրին է պատկանում Կազմակերպության կառավարման և գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

17. Կազմակերպության հիմնադրի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը,

բ) Կազմակերպության տնօրենի աշխատանքի նշանակելը և աշխատանքից ազատելը,

գ) Կազմակերպության կառուցվածքը որոշելը և ծախսերի նախահաշվի հաստատումը,

դ) Կազմակերպության գործունեության դադարումը:

18. Կազմակերպության բարձրագույն ղեկավար պաշտոնատար անձը դրա տնօրենն է, որին նշանակում է հիմնադիրը:

19. Կազմակերպության տնօրենը գործում է սույն կանոնադրությամբ և հիմնադրի կողմից տրված հանձնարարականների համաձայն:

Հանձնարարականներում կարող են սահմանվել տնօրենի այլ իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և փոխհարաբերությունները կազմակերպության հիմնադրի ու կոլեկտիվի հետ և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կհամարի հիմնադիրը:

20. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բացում է հաշիվներ բանկերում,

զ) օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

է) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

21. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերակսկողությունն իրականացվում է հիմնադրի կողմից սահմանված կարգով:

22. Հիմնադրի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանը իրավասու է Կազմակերպության տնօրենի կողմից տրված լիազորագրի հիման վրա ներկայացնել կազմակերպության շահերը Հայաստանի Հանրապետության դատարաններում՝ այդ թվում ընդհանուր իրավասության դատարաններում, վարչական դատարանում, քաղաքացիական վերաքննիչ դատարանում, վարչական վերաքննիչ դատարանում, վճարեկ դատարանում:

5. Կազմակերպության սեփականությունը և ամրացված գույքը

23. Կազմակերպությունը իր հիմնադրից առանձնացված գույք չունի:

Կազմակերպության գույքը սեփականության իրավունքով պատկանում է Սպիտակ համայնքին:

24. Կազմակերպության գույքային իրավունքների օբյեկտներն են՝

ա) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները,

բ) ախատանքները և ծառայությունները,

գ) տեղեկատվությունը,

դ) ոչ նյութական բարիքները:

25. Կազմակերպությանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել կազմակերպությանը: Կազմակերպությանը պատկանող գույքի թիվն ու արժեքը չի սահմանափակվում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի կողմից հատկացված ֆինանսական միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ գործունեությունից:

6. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

26. Կազմակերպության գործունեությունը կարող է դադարել միայն հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

27. Կազմակերպության հիմնադիրը կազմակերպության գործունեության դադարման մասին որոշում ընդունելուց հետո նշանակում է լուծարման հանձնաժողով, սահմանում է լուծարման կարգն ու ժամկետներն: Կազմակերպության լուծարման ժամկետը չի կարող երկու ամսից պակաս լինել:

28. Կազմակերպության գործունեությունը դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » ապրիլի 2022թ. № 34 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի նախկին Շենավան համայնքի իրավահաջորդը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով և հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

ԿՈՂՄ (15)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻՔԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ՕՏՅՈՐՈՍՅԱՆ

Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14

ք. Սպիտակ

Հաստատված է
Սպիտակ համայնքի ավագանու
14.04.2022թ. թիվ 34 -Ա որոշմամբ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային
ոչ առևտրային կազմակերպություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է, որն ապահովում է 3-6 տարեկան երեխաների խնամքը, առողջության ամրապնդումը, դաստիարակությունը և ուսուցումը:

2. Հաստատության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքը՝ որի իրավահաջորդը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը:

3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հաստատությունը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում.

ա) Կանոնադրությամբ ամրագրված իր ֆունկցիաների կատարման

բ) Կրթական ծրագրերի իրականացման, ծավալի և որակի

գ) Կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդների և ձևերի

դ) Երեխաների կյանքի և առողջության պահպանման համար:

5. Հաստատության գտնվելու վայրն է 1801 ՀՀ Լոռու մարզ գյուղ Շենավան 2-րդ փողոց № 45:

6. Հաստատության լրիվ անվանումն է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

7. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Հաստատությունն ունի հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և

սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

18. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

19. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

20. Հաստատություն ընդունվում են 3-6 տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա:

21. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության ոլորտի պետական մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, կրթության ոլորտի պետական մարմնի հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

22. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են կրթության ոլորտի պետական մարմնի մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

23. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

24. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

25. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

26. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

27. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

28. Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

29. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն կրթության ոլորտի պետական մարմնի հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

30. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

31. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

32. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

33. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

34. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը,
բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը,

զ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը,

է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

35. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

36" Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը

ը) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

37. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

38. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

39. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ի) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

լ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

խ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ծ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

40. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի իրավական ակտի համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

41" Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

42. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

43. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

44. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

45. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

46. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

47. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

48. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

49" Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

50. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

51. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

52. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

53. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 14 » ապրիլի 2022թ. N⁰ 35 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի նախկին Շենավան համայնքի իրավահաջորդը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2" Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի «Արեգակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 43-Ա որոշումը:

ԿՈՂՄ (15)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱԶԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼԿԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 14
ք. Սպիտակ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՇԵՆԱԿԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և
պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատողների քանակը՝ 7
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորները	Պաշտոնային դրույքաչափերը (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	110 000
Հաշվապահ	0,5	96 000
Դաստիարակ	1,12	96 000
Դաստիարակի օգնական	1	95 000
Խոհարար	1	93 000
Բուժքույր	0,5	96 000
Հավաքարար	0,5	96 000

ԱՇԽԱՏԱԿԱՆՍԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



G. Vanyan

Ա. ՖՐԱՆԳՅԱՆ